

ԿՈՌԴՈՒՊՑԻԱՅԻ
ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՏԵՂ
ՋԱՆՔԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

CONCERTED EFFORTS
TO FIGHT AGAINST CORRUPTION
AT THE EUROPEAN
LEVELS

Կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնական ուղղությունները

Three main priorities set for Armenia in the fight against corruption

- Հասարակության կողմից կոռուպցիայի եւ դրա հետեւանքների հասարակական վտանգավորության աստիճանի գիտակցման արմատավորում.
- Կոռուպցիայի կանխարգելում.
- Օրենքի գերակայության ապահովում՝ ուղղված անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությանը:
- **Raising public awareness of the danger posed to society by corruption and its consequences;**
- **Preventing corruption;**
- **Ensuring the rule of law in order to protect the rights and legitimate interests of individuals.**

Առաջին ուղղությունը

The first priority of the reform

- Հասարակության կողմից կոռուպցիայի եւ դրա հետեւանքների հասարակական վտանգավորության աստիճանի գիտակցման արմատավորում.

Առաջին ուղղությունում կարելի է կատարել հակակոռուպցիոն ռազմավարության մշակման, հանրության կրթության, հակակոռուպցիոն պայքարում քաղաքացիական ինստիտուտների համախմբման, անկախ ՋԼՄ-ների դերը.

1. Raising public awareness of the danger posed to society by corruption and its consequences

Under the first priority,

IT IS NECESSARY TO HIGHLIGHT THE ELABORATION OF AN ANTI-CORRUPTION STRATEGY, PUBLIC AWARENESS, THE CONSOLIDATION OF CIVIL SOCIETY INSTITUTIONS IN THE FIGHT AGAINST CORRUPTION, AND THE ROLE OF THE INDEPENDENT MASS MEDIA.

ԵՐԿՐՈՐԴ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

The second priority of the reform

- Կոռուպցիայի կանխարգելում.
իշխանությունների քաղաքական կամքի, պետական կառավարման համակարգի կատարելագործման, պետական կառավարմանը հասարակության մասնակցության, հասարակական գործընթացներին պետության միջամտության, պետական պաշտոնյաների կողմից վարքագծի կանոնների պահպանման դերը.

2. Preventing Corruption

Under the second priority,

ONE SHOULD FOCUS ON THE IMPORTANCE OF THE POLITICAL WILL OF THE AUTHORITIES, IMPROVEMENTS IN THE PUBLIC ADMINISTRATIVE SYSTEM, ENSURING PUBLIC PARTICIPATION IN GOVERNANCE, INTERVENTION OF THE STATE IN THE SOCIETAL PROCESS, AND ADHERENCE TO CODES OF CONDUCT BY PUBLIC OFFICIALS.

ԵՐՐՈՐԴ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

The third priority of the reform

- Օրենքի գերակայության ապահովում՝ ուղղված անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությանը. ուժեղ ու անկախ դատական իշխանության, օրենսդրական դաշտի հստակեցման եւ կարգավորման, օրենքների պարտադիր կատարման ապահովման, անձանց իրավունքների պաշտպանության եւ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերը:

3. Ensuring the rule of law in order to protect the rights and legitimate interests of individuals.

Under the third priority,

IT IS NECESSARY TO EMPHASIZE THE ROLE OF A STRONG AND INDEPENDENT JUDICIARY, THE IMPORANCE OF STREAMLINING AND CLARIFYING THE LEGISLATIVE FRAMMEWORK, ENSURING FLAWLESS ENFORCEMENT OF LAWS, PROTECTING HUMAN RIGHTS, AND THE HUMAN RIGHTS' DEFENDER INSTITUTIION.

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հանրային ծառայությունը պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը, պետական ծառայությունը և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությունը, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը: *Հոդ. 1*

PUBLIC SERVICE

Public service is the fulfillment of authorities assigned to the state by the legislation, which covers political (discretionary) service, public service, including civil service and special services, municipal services and civil work. State bodies and communities implement policy through the persons occupying Political, Discretionary and Civil Positions, within the scope of authorities assigned to them by the legislation of the Republic of Armenia, by adoption of political decisions and coordination of their execution.

Art. 1

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ներքին գործերի, հարկային, մաքսային, փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, ինչպես նաև դիվանագիտական և օրենքներով նախատեսված այլ ծառայությունները:

Հոդ. 1

STATE SERVICE

The state service as a professional activity, which is directed at the implementation of the objectives and functions reserved to the state bodies by the legislation of the Republic of Armenia.

State Service includes Civil Service, Judicial Service, the special services, namely in the Republican Executive Bodies of Defense, National Security, Police, Tax, Customs, Emergencies, as well as Diplomatic and other Services envisaged by the laws.

Article 1

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ մասնագիտական գործունեություն, որը կատարվում է սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված մարմիններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով:

CIVIL SERVICE

Հոդված 3

Civil Service is defined as a professional activity independent from the changes of correlations between political forces, which is performed in the Staffs of the President of the Republic of Armenia, the Government of the Republic of Armenia, the Republican Executive Bodies of the Republic of Armenia, Regional Governor's Offices of the Republic of Armenia (the Municipality of Yerevan), the permanently operating bodies created by the laws of the Republic of Armenia, with the exception of the Central Bank, with the purpose of implementing the objectives and functions reserved to those bodies by the legislation of the Republic of Armenia.

Article 3

Քաղաքացիական ծառայության հիմնական սկզբունքները

The Main Principles of the Civil Service of Armenia

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների գերակայությունը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնահերթությունը.
- քաղաքացիական ծառայության կայունությունը.
- քաղաքացիական ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների միասնականությունը և օրենքի առջև քաղաքացիական ծառայողների իրավահավասարո-թյունը.
- քաղաքացիական ծառայության հրապարակայնությունը.
- քաղաքացիական ծառայողների քաղաքական զսպվածությունը.
- քաղաքացիների համար քաղաքացիական ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան.
- քաղաքացիական ծառայողների պրոֆեսիոնալիզմը.
- քաղաքացիական ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը.
- քաղաքացիական ծառայողների պատասխանատվությունն իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.
- քաղաքացիական ծառայողների գործունեության վերահսկելիությունը և հաշվետու լինելը:
- The supremacy of the Constitution and laws of the Republic of Armenia, the priority of human and citizen's rights and liberties;
- The stability of the Civil Service;
- The uniformity of the principal requirements for Civil Servants and the legal equality of Civil Servants before the law;
- The openness of the Civil Service;
- The political restraint of the Civil Servants;
- The equal accessibility of the Civil Service for citizens, equivalent to their professional knowledge and working skills;
- The professionalism of the Civil Servants;
- The legal and social protection of the Civil Servants;
- The responsibility of the Civil Servants for not performing or improperly performing their service duties;
- The supervision of the activity of the Civil Servants and their being accountable.

Քաղաքացիական ծառայության պաշտոն գրադեցնելու իրավունք ունեցող անձինք

Քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի
անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող,
Հայերենին տիրապետող,
18 տարին լրացած

Հայաստանի Հարապետության քաղաքացիները:
Հոդված 11

PERSONS HAVING RIGHT TO OCCUPY THE CIVIL SERVICE POSITIONS

1. CITIZENS OF THE REPUBLIC OF ARMENIA
2. MASTERING THE ARMENIA LANGUAGE
3. HAVING ATTAINED 18 YEARS OF AGE
4. METTING THE REQUIREMENTS OF THE ESTABLISHED BY THE PASSPORT OF THE GIVEN POSITION

Article 11

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՉՖԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ**

THE PERSONS HAVING NO RIGHT TO OCCUPY THE CIVIL SERVICE POSITION

1. դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
 2. դատական կարգով զրկվել է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.
 3. տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.
 4. դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
 5. խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:
1. *Has been recognized incapable or of limited capacity through a judicial procedure;*
 2. *Has been deprived of the right to occupy a Civil Service Position through a judicial procedure;*
 3. *Is suffering from an illness that may impede the performance of service duties and implementation of authorities in case of being appointed to a Civil Service Position. The Government of the Republic of Armenia shall approve the list of those illnesses;*
 4. *Has been sentenced for a crime and whose criminal record has not been removed or cleared by the prescribed procedure;*
 5. *Has avoided the mandatory term of military service.*

Հոդված 12
Article 12

Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումների *CONFLICTS OF INTEREST*

- կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.
- անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.
- լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.
- իրականացնել քաղաքացիական ծառայողների քաղաքական զսպվածության սկզբունքի խախտումներ՝ իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել.
- Perform other paid work, with the exception of scientific, pedagogical, and creative work;
- Be personally engaged in entrepreneurial activity;
- Be the representative of third persons in the relations connected to the body where he/she is employed, or which is immediately subordinate to or supervised himself/herself;
- Implement violations of the principle of the political restraint of the Civil servants, that is, to use his/her service position in the interests of parties, non-governmental organizations, including religious associations, proselytize in their favor or implement other political or religious activities while carrying out his/her duties;

Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումների *CONFLICTS OF INTEREST*

- հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.
 - ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.
 - ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.
 - որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել սույն հոդվածի 3-րդ կետում նշված անձանց հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
- Հոդ. 24*
- Receive an honorarium for publications or speeches arising from the performance of his/her service duties;
 - Use material and technical, financial and information resources, other state property and service duties;
 - Receive gifts, amounts of money or services from other persons for his/her service duties, with the exception of the cases envisaged by the legislation of the RA.
 - As a state representative, conclude property transactions with close relatives or in-laws (parent, child, brother, sister, spouse's parent, child, brother, sister), with the exception of the cases envisaged by the legislation of the RA;
 - Work together with close relatives (parent, child, brother, sister, spouse's parent, child, brother, sister), in case of direct subordination or supervision over one another.

Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումների *CONFLICTS OF INTEREST*

- Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, քաղաքացիական ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 10 և ավելի տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Քաղաքացիական ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալ եկամուտ:
- a civil servant possessing 10% or more of the statutory capital of a commercial organization, is under the obligation within a period of one month following appointment to the civil service to hand his/her share over the entrusted management, but however, the civil servant has the right to receive income from the transferred property.

Article 24

Հոդված 24

Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող
սահմանափակումների
CONFLICTS OF INTEREST

- Քաղաքացիական ծառայողն իրավունք չունի քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վեր-ջին մեկ տարվա ընթացքում:

Հոդված 24

- Individuals leaving the civil service to a one year ban on accepting employment with an employer or organization over which s/he had exercised immediate contract during the last year holding his/her civil service position.

Article 24

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ DISCLOSURE OF ASSETS

Հաջորդ երկու տարիների ընթացքում գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը նախատեսվում է տարածել բոլոր քաղաքացիական ծառայողների վրա:

It is expected that during the next two years the requirement to file declarations of property and income would be extended to all civil servants.

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ*

ՌՈՏԱՑԻԱ ROTATION

ՌՈՏԱՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՏԿԱՊԵՍ
ԿՈՌՈՒՊԱՑՎԱԾ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ:

It should be useful to introduce and extend the practice of rotation in those areas of the public administration which are especially vulnerable to corruption.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

RULE OF ETHICS

- *հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները (դրոշը, զինանշանը, օրհներգը) եւ պետական լեզուն.*
- *ղեկավարվել մարդասիրության, արդարության եւ ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով.*
- *զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել պետական մարմնի աշխատանքները կամ վարկաբեկել և հեղինակագրկել նրան,*
- *լինել անաչառ, անկողմնակալ, զուսպ եւ օրինակելի.*
- *անհարկի չընդգծել իր պաշտոնական դիրքը.*
- *իր բանավոր եւ գրավոր շփումներում բացառել կոպտության դրսեւորումը.*
- *քաղաքավարի լինել պաշտոնատար անձանց, աշխատողների եւ ֆիզիկական անձանց հետ.*
- *To respect person's dignity in spite of his/her nationality, race, gender, language, religion, political and other views. social origin, property or other condition;*
- *To be guided by the moral norms based on the principles of fairness, humanity and justice;*
- *To avoid such actions that can be obstacles to the activities of the state bodies or discredit them;*
- *To be fair, unbiased, self-possessed and faultless in one's behavior;*
- *Not to emphasize one's authority without any particular reason;*
- *To exclude rude behavior in one's oral and written contact;*
- *To be polite with the official people, colleagues and physical persons;*

- իր վարքով նպաստել հասարակության այն համոզմունքի եւ հավատի ձեւավորմանը եւ պահպանմանը, որ քաղաքացիական ծառայության համակարգը հիմնված անկողմնակալության, ազնվության եւ արդյունավետության գաղափարի վրա.
- խուսափել ցանկացած տեսակի հովանավորչությունից եւ ծառայության ընթացքում օգտագործել միայն բարոյական միջոցներ՝ նպատակին հասնելու համար.
- իր վարքով իրեն կախվածության մեջ չդնել որեւէ անձից.
- խուսափել անհարկի խոստումներից, գիտակցել իր խոսքի արժեքը եւ կարելու-րությունը, տված խոստման հնարավոր բացասական հետեւանքները
- չօգտագործել ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած տեղեկատվությունը՝ իր անձնական շահերի համար.
- հարգանքով վերաբերվել այլ ժողովուրդների եւ ազգերի էթնիկական առանձնահատկություններին, ավանդույթներին եւ սովորույթներին:

ԿԱՆՈՆԵՐ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԷԹԻԿԱՅԻ

31 մայիսի 2002 թվականի N 13-Ն

- *To assist in developing and maintaining the belief and confidence of the society that the system of the civil service is based on ideas of justice, efficiency and impartiality;*
- *To avoid any kind of sponsorship and use moral means in reaching one's goals;*
- *Not to make oneself dependant on anyone*
- *To avoid unnecessary promises, to realize the importance and value of one's speech, and the possible negative consequences of a promise;;*
- *Not abuse the information obtained at job for own personal benefits;*
- *To respect other nationalities' and nations' ethical peculiarities, customs and habits.*

Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը DISCIPLINARY PROCEEDINGS

- նախազգուշացում.
- նկատողություն.
- խիստ նկատողություն.
- օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցում.
- զբաղեցրած պաշտոնից ազատում՝ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությանը:
- քաղաքացիական ծառայության՝ ավելի բարձր դասային աստիճանի, բացառությամբ քաղաքացիական ծառայության բարձրագույն դասային աստիճանի, իջեցում՝ մեկ աստիճանով:

- Preliminary warning;
- Reprimand
- Severe reprimand;
- Salary reduction by the procedure defined by law;
- Removal from the position occupied, with the agreement of the Civil Service Council.

Article 32

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

SERVICE INVESTIGATIONS

- Ծառայողական քննություն անցկացնելու մասին քաղաքացիական ծառայողի կողմից խորհուրդ համապատասխան գրավոր պահանջ ներկայացնելը՝ իր նկատմամբ կիրառվելիք կամ կիրառված կարգապահական տույժի կապակցությամբ հայտնցած անհամաձայնության կապակցությամբ.
 - քաղաքացիական ծառայողի նկատմամբ խիստ նկատողությունը և աշխատա-վարձի իջեցումը կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կիրառելը.
 - Աշխատանքից ազատելու կարգապահական տույժը կիրառելու համաձայնություն ստանալու համար
- Օրենքով նախատեսված կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից խորհուրդ դիմում ներկայացնելը:

ՀՈԴ» 6

1. **A civil servant submits an appropriate written application stating his/her disagreement with the disciplinary penalties imposed on him/her and a request to revoke these penalties;**
2. **When penalties such as “severe reprimand” and/or “salary reduction” have been imposed repeatedly on the civil servant within a period of one year; and**
3. **When the official authorized to impose disciplinary penalties submits an application to the Council to approve the disciplinary penalty of dismissal.**

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

THE OBJECTIVE OF THE SERVICE INVESTIGATION

- Մաղաքացիական ծառայության հիմնական սկզբունքների իրականացումը.
- Ծառայողական կարգապահության ամրապնդումը, քաղաքացիական ծառայողի կողմից կատարված կարգապահական խախտման յուրաքանչյուր դեպքի ժամանակին բացահայտումը, որպեսզի քաղաքացիական ծառայողների նկատմամբ կարգապահական տույժերը կիրառվեն խախտման ծանրությունը և այլ հանգամանքները հաշվի առնելով, ինչպես նաև բացառվեն անհիմն կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը.
- **Implementation of the main principles of the Civil Service;**
- **Strengthening service discipline, timely detection of all cases of disciplinary violation by the civil servants so as to implement disciplinary penalties against civil servant who due consideration of the severity of the violation and other circumstances, as well as to eradicate the unjustified cases of implementing disciplinary penalties**

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

THE OBJECTIVE OF THE SERVICE INVESTIGATION

- ինչպես նաև բացառվեն անհիմն կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը.
 - քաղաքացիական ծառայողների սույն կարգով նախատեսված դեպքերում իրավունքների մինչդատական պաշտպանությունը.
 - ծառայողական քննությանը պարզաբանման ենթակա հանգանանքների ժամանակին, լրիվ, բազմակողմանի եւ օբյեկտիվ պարզաբանումը:
- ***Prevention of disciplinary violations and elimination of the circumstances contributing to their origination;***
 - ***Protection of the right of the civil servants prior to court proceedings;***
 - ***Timely, thorough, comprehensive and objective investigation of the facts to be revealed through investigation.***

Ծառայողական քննությանը պարզաբանման ենթակա հանգամանքները

The facts to be revealed through official investigation

- *Ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ քաղաքացիական ծառայողի կողմից խորհուրդ ներկայացված պահանջում նշված՝ Օրենքով նախատեսված կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից կիրառվելիք կամ կիրառված կարգապահական տույժի, ինչպես նաև քաղաքացիական ծառայողի կողմից կարգապահական խախտում թույլ տալու հիմնավորվածությունը.*
- *Սույն կարգով նախատեսված կողմերի եւ այլ անձանց ունեցած առնչությունն ու մեղավորությունը քաղաքացիական ծառայողի կատարած կարգապահական խախտման դեպքին.*
- *The validity of the disciplinary penalties applied or to be applied by the official having authority to implement disciplinary penalties as prescribed by the Law and as mentioned in the application submitted to the Council by the civil servant for conducting official investigation as well as the proof of the fact that the civil servant has committed a disciplinary violation;*
- *The relation and guilt of the parties specified in the present order and other parties to the disciplinary violation committed by the civil servant;*

Ծառայողական քննությանը պարզաբանման ենթակա հանգամանքները

The facts to be revealed through official investigation

- Ծառայողական քննությունն անցկացնելու վերաբերյալ խորհուրդներ կայացված դիմումների հիմնավորվածությունը.
- Կարգապահական խախտումների առաջացմանը նպաստող պայմանները.
- Այլ հանգամանքներ, որոնցով սույն կարգով նախատեսված կողմերը հիմնավորում են իրենց դիմումները:
- *the validity of the applications submitted to the Council on conducting official investigation;*
- *The circumstances contributing to disciplinary violations;*
- *Other circumstances by which the parties specified in the present order justify their applications*

Քաղաքացիական ծառայողին հանձնարարականներ տալու սահմանափակումները

REPORTING CORRUPTION

Քաղաքացիական ծառայողին չեն կարող տրվել այնպիսի բանավոր կամ գրավոր հանձնարարականներ, որոնք՝

- ա) հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին.
- բ) հանձնարարականներ տվողի կամ կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս են:

*Քաղաքացիական ծառայության օրենք,
հոդ. 25*

- Civil servant cannot be given such oral or written assignment which;
- Contradict the Constitution and laws of the Republic of Armenia;
 - Are beyond the authorities of either the issuer or the receiver thereof.

Law on Civil Service, art. 25

Քաղաքացիական ծառայողին հանձնարարականներ տալու սահմանափակումները

REPORTING CORRUPTION

1-ին կետի խախտմամբ հանձնարարականներ տալու դեպ-քերում քաղա-քացիական ծառայողը պարտավոր է ստացած հանձնարարականի օրինականու-թյան վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր զեկուցել հանձնարարական տվողին և նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձանց: Եթե վերադասը (նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անձը կամ հանձնարարական տվողը) գրավոր հաստատում են տրված հանձնարարականը, ապա քաղաքացիական ծառայողը պարտավոր է դա կատարել, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնարարականի կատարումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության, և այդ մասին գրավոր տեղեկացնել քաղաքացիական ծառայության խորհրդին: Քաղաքացիական ծառայողի կողմից այդ հանձնարարականի կատարման համար պատասխանատվությունը կրում է հանձնարարականը գրավոր հիստորիայում սկզբում:

In the case of issuing assignments in violation of the Constitution and the Law, the Civil Servant is obligated to immediately report in writing on his/her doubts on the lawfulness of the assignment to the issuer thereof and to the superior of the latter, or to the persons substitution for them. If the superior affirm the assignment in writing the Civil Servant shall be obliged to perform it and inform the Civil Service Council about that in writing, with the exception of cases when the performance of the assignment will lead to criminal or administrative liability determined by the legislation of the Republic of Armenia.

ՆՎԵՐՆԵՐ GIFTS

Պետական պաշտոնյաների կողմից ստացված նվերները՝ կապված իրենց ծառայողական պարտականությունների հետ՝ պետք՝ հանձնվեն պետությանը, եթե դրանց արժեքը կազմում է իրենց ամսեկան աշխատավարձի հնգապատիկը:

Առագարկություն է արված նվազեցնուլու քաղաքացիական ծառայողների և այլ պետական պաշտոնյաների կողմից ընդունվող նվերների արժեքն այնպես, որպեսզի դրանք չդիտվեն որպես կաշառք:

The gifts received by public officials in connection with their service or position must be handed over the State if the value of such gifts exceeds 5 times the official's monthly salary.

It is recommended to lower the value of any gifts that may be accepted by civil servants, employees or other officials to levels that clearly do not raise concerns regarding bribes or other forms of undue advantage and that a reporting obligation in respect of gifts of any value be introduced.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

TRANSPARECY ACCESS TO INFORMATION

Յուրաքանչյուր անձ
իրավունք ունի ծանոթանալու
իր փնտրած տեղեկությանը
եւ (կամ) դա ստանալու
նպատակով օրենքով
սահմանված կարգով
հարցմամբ դիմելու
տեղեկատվություն
տնօրինողին եւ ստանալու
այդ տեղեկությունը:
Տեղեկությունը կարող է
պահանգվել գրավոր կամ
բանավոր:

*Տեղեկատվության ազատության
մասին ՀՀ օրենք, հոդ. 6*

Everyone has the right to
have access to
information and to apply
to entities possessing and
processing information, in
conformity with the
procedure prescribed by
Law. Information may be
requested either orally or
in writing.

Law on Freedom of Information Art. 6

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՈՒՄՆԵՐԸ

REFUSAL TO PROVIDE INFORMATION

- պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
- խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ մանկազրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.
- պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
- բացահայտում է մասնագիտական գործունեությանը պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
- խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:
- Contain a state, service, banking or commercial secret;
- Violates the right to personal and family privacy, as well as the secrecy of correspondence, telephone conversations, postal, telegraphic and other communications;
- Contains data concerning a preliminary investigation, which should not be made public;
- Discloses information subject to non-disclosure depending on the nature of professional activity (for physicians, notaries, defense attorneys, etc.);
- Violates copyright and/or adjacent rights.

Law on Freedom of Information Art.8

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

PUBLIC CONSULTATION

Իրավական ակտի նախագիծը մշակող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, պետական կամ համայնքային հիմնարկը կամ իրավաբանական անձը (այսուհետ՝ նախագիծը մշակող մարմին), այդ մարմնի աշխատակիցների ու մասնագետների թվից կարող է ստեղծել նախագծի մշակման հանձնաժողով: Նախագծի մշակման աշխատանքները կատարելու համար կարող են ներգրավվել նաեւ գիտական կազմակերպությունների, շահագրգիռ մարմինների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնագետներ:

“Any state or local self-government body or state or community entity drafting a legal act may invite representatives of academic organizations, stakeholder entities and organizations to participate in the drafting process. Drafts of laws and decisions submitted to the National Assembly for debate may be publicized in the press or either media outlets as well as made available for the purposes of public discussion.”

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՄՈՒՄԸ

PUBLIC AWARENESS

Իրավական ակտը կիրառող
մարմինների կողմից
իրազեկումն իրականացվում է
պաշտոնական
հաղորդագրության,
զանգվածային լրատվության
միջոցների հետ
ասուլիսներ եւ հանդիպումներ
կազմակերպելու, դրանց
հարցազրույցներ տալու,
հոդվածներ կամ
տեղեկատվություն
հրապարակելու կամ
հեռուստատեսությամբ ու
ռադիոյով ելույթներ
ունենալու միջոցով:

The public is notified of
legal acts by official
releases, conferences
and meetings with
media entities,
interviews,
publications of articles
and other information
in the press as well as
TV and radio
broadcasts.

GOVERNMENT DECISION N_1146

CONTROL OF PUBLIC ADMINISTRATION

Քաղաքացին,
իրավաբանական անձը, որը
համաձայն չէ իր
առաջարկության,
դիմումի, բողոքի առթիվ
ընդունված որոշմանը,
իրավունք ունի այդ որոշումը
բողոքարկել այն մարմին կամ
պաշտոնատար անձին, որին
անմիջականորեն ենթակա են
բողոքարկվող որոշում
ընդունած պետական
մարմինը, տեղական
ինքնակառավարման
մարմինը կամ պաշտոնատար
անձը: Այդ դեպքում դիմումը
քննարկվում է 15 օրվա
ընթացքում:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴԻՄՈՒՄՆԵՐԸ
ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ«
ՀՈԴ» 8

- A citizen or a legal person disagreeing with the decision taken in response to their proposals, applications or complaints shall be entitled to appeal against it to the superior the superior authority

LAW ON PROCEDURE FOR REVIEWING CITIZEN'S
PROPOSALS, APPLICATIONS AND COMPLAINTS, ART. 8

Մարդու իրավունքների պաշտպանը Human Rights Defender

Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է՝

1) անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նաեւ նախնական կալանքի եւ ազատազրկման վայրեր.

2) ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել եւ ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր.

3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատարանձանցից եւ պետական ծառայողներից, բացառությամբ դատարանների ու դատավորների,

ստանալ բողոքի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՈՒ

- The human rights Defender (Ombudsman) is authorized to have unrestricted access to any state institution or organization, to require and receive information and documentation relating to the complaint from state or local self-governing body or their officials.

law on the human rights defender, art. 8

ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ և ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ,

ԱՆԸՆԴՅԱՏՈՒԹՅՈՒՆ և ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,

ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ և ԹԱՓԱՆՑԻԼՈՒԹՅՈՒՆ:

THE RULE OF LAW AND IMPARTIALITY,

CONSISTENCY AND CONTINUITY; AND PUBLICITY AND

TRANSPARENCY.